ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7

ք. Երևան «12» 12 2019թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Սողոմոնյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆլեշ Մոտորս» ՍՊ Ընկերությունը ի դեմս տնօրեն Ա.Լալայանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի **N 1 և N 1.1** հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը սահմանվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

---

[1] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **21** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային

օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[2]

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31	Հասցեն՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՎՀՀ՝00846441	ՀՎՀՀ 00873228
ՀՀ՝ 900000900283	Հ/Հ 1510012745550100
Կենտրոնական գանձապետարան	«Արարատբանկ» ԲԲԸ
Գործադիր տնօրեն	Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի տնօրեն՝
Արթուր Սողոմոնյան	Ա. Լալայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[2] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:Եթե գնման առարկա է հանդիսանում շինարարական ծրագրերի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերումը, ապա կետը շարադրվում է հետևյալ խմբագրությամբ՝ «7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե՝*

- պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից փուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները.

- պայմանագրի կատարման համար հատկացվում են ֆինանսական միջոցներ, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից փուժանքի ձևով ներկայացված որակավորման ապահովումը՝ կապալի օբյեկտի համար հատկացված ֆինանսական միջոցների տաս տոկոսի չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով:

Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ փուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:»:

Հավելված N 1
«12» 12 2019թ. կնքված
ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111130/7	Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն հինգ ամբարձիչներով (домкрат)՝ առնվազն երեք ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ: Ծառայությունները պետք է մատուցվեն տրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ առնվազն մեկից-հինգ օրացուցային օրվա ընթացքում/կախված ավտոմեքենայի անսարքությունից/, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Խափանված մեքենայի մասին տեղեկություն ստանալուց հետո տեխսպասարկման կայանից դեպի խափանման (վթարի) վայր դուրս գալու և իր միջոցներով, քարշակով ավտոմեքենան վերանորոգման կայան տեղափոխելու հնարավորությամբ: Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա նվազագույնը 7 բոքսեր ավտոմեքենաների վրա միաժամանակ աշխատելու հնարավորություն: Կատարի շարժիչի և նրա համակարգերի, ուժային և ղեկավարման համակարգերի, ընթացքային մասի և թափքի, ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ունենա էլեկտրոնային և էլեկտրական բնույթի խափանումները վերացնելու հնարավորություն, կահավորված լինի անհրաժեշտ սարքավորումներով, ունենա ծրագրեր և տեխնիկական գրականություն՝ ախտորոշում կատարելու համար, դեֆորմացված թափքի ուղղման ստենդ, զոդման անհրաժեշտ սարքավորումներ, այդ թվում նաև ալյումինի և չուգունի, ներկման, չորացման և հարդարման ժամանակակից միջոցներ, կատարվող աշխատանքների վրա ինժեներական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն: Տեխսպասարկումն իրականացնող կայանը պետք է ունենա վերոնշյալ նվազագույն հնարավորությունները որակով և ժամանակին տեխսպասարկում կատարելու բոլոր միջոցները: Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություն այլ երկրների արտադրության ավտոմոբիլների, որից	Դրամ	**Ներկայացված է Հավելված 1.1-ով**	1	Ք. Երևան, Ռուբինյանց փ 31	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 3 տարի

		Toyota LC-Prado-4.0 **1 հատ** Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է SU – 1 ներառվող ծառայությունների անվանում / տեխ. զննում ըստ հավելված Ա-ի/ SU – 2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները/ ըստ հավելված Բ-ի/: - Օգտագործվող պահեստամասերը պերք է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության: - Մասնակիցը պետք է հավաստի,որ Ունի ավտոտեխնիկական սպասարկման կայան Երեւանում, որը կահավորված է ավտովերանորոգման համապատասխան սարքավորումներով /ամբարձիչներ, վուլկանացնող և կարգավորող սարքեր, ախտորոշիչ սարքեր և այլն/ Վերանորոգման ներկայացված ավտոմեքենան դիագնոստիկ զննման պետք է ենթարկվի ներկայացված օրը և մեկօրյա ժամկետում Պատվիրատուին հայտնի տեղեկատվություն վերանորոգման վերաբերյալ:					

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 900000900283
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՎՀՀ 00873228
Հ/Հ 1510012745550100
«Արարատբանկ» ԲԲԸ
Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա. Լալայան

/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 1.1
«12» 12 2019թ. կնքված
ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7 ծածկագրով պայմանագրի

ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԳՆԵՐԸ

SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		Toyota LC-Prado-4.0 2009թվի արտադրության 4x4
1		2
Անվանումը		Մեկ միավորի համար առավելագույն գները՝ ներառյալ բոլոր հարկերը
ՀԱՎԵԼՎԱԾ Ա		
SU-1 ներառվող ստուգման ծառայությունների		Այլ պետությունների արտադրության մեքենաներ
1	Բռնկման համակարգի ստուգում	4,500.00
2	Սառեցման համակարգի ստուգում	3,500.00
3	Յուղման համակարգի ստուգում	3,000.00
4	Արտացման համակարգի ստուգում	3,000.00
5	Կցորդման համակարգի ստուգում	100.00
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	4,500.00
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	100.00
8	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	100.00
9	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	4,500.00
10	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	4,500.00
11	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	4,500.00
12	ABS համակարգի ստուգում	4,500.00
13	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	4,500.00
14	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	4,500.00
15	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	4,500.00

ՏՍ-1 ներառվող ծառայությունների անվանումը		Այլ պետությունների արտադրության մեքենաներ
1. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		
16	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	3,000.00
17	Յուղի պոմպի փոխարինում	20,000.00
18	Ղեկավարման բլոկի վերանորոգում	25,000.00
19	Բոնկման կարգավորում	4,000.00
20	CO կարգավորում	4,000.00
21	Օդի զտիչի փոխարինում	2,000.00
22	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	12,000.00
23	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	12,000.00
24	Բենզամղիչի փոխարինում	17,000.00
25	Վառելիքի զտիչի փոխարինում	9,000.00
26	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	10,000.00
27	Սրահի զտիչի փոխարինում	2,500.00
2. Սառեցման և արտածման համակարգ		
28	Հովհարի փոկի հանում և տեղադրում	6,500.00
29	Հովհարի հանում և տեղադրում	11,000.00
30	Ռադիատորի հանում և տեղադրում	15,000.00
31	Նույնը կոնդիցիոների դեպքում	15,000.00
32	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	15,000.00
33	Ռադիատորի վերանորոգում	40,000.00
34	Թերմոստատի փոխարինում	14,000.00
35	Ջրի պոմպի փոխարինում	21,000.00
36	Նույնը կոնդիցիոների դեպքում	10.00
37	Ջրի պոմպի վերանորոգում	10.00
38	Նույնը կոնդիցիոների դեպքում	10.00
39	Ընդարձակող բաքի փոխարինում	4,000.00
40	Խլարարի հանում և տեղադրում	6,000.00
41	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2,500.00
3. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
42	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	13,000.00
4. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
43	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	15,000.00
44	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,	10.00

	վերանորոգում	
45	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	18,000.00
46	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	11,000.00
5. Կախոց		
47	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	40,000.00
48	Տրավերսի հանում և տեղադրում	25,000.00
49	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	10,000.00
50	Անվակունդի առանցքակալի փոխարինում	13,000.00
51	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	16,000.00
52	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	13,000.00
53	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	16,000.00
54	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	16,000.00
55	Զսպանակի հանում և տեղադրում	4,500.00
56	Զսպակի հանում և տեղադրում	6,500.00
57	Զսպակի վռանների փոխարինում	6,500.00
58	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7,000.00
59	Ներքևի լծակի հանում և տեղադրում	6,000.00
60	Ներքևի լծակի վռանների փոխարինում	7,000.00
61	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	5,000.00
62	Միջին ձգանի հանում և տեղադրում	6,000.00
63	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	3,500.00
64	Վերևի լծակի հանում և տեղադրում	5,000.00
65	Վերևի լծակի վռանների փոխարինում	7,500.00
66	Գնդե հոդակապերի փոխարինում	7,000.00
67	Ծայրակաների հանում և տեղադրում	4,000.00
68	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3,000.00
69	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5,000.00
70	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	5,000.00
71	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	7,000.00
72	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	7,000.00
73	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	11,000.00
74	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	5,500.00
75	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	5,000.00
76	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	4,000.00
77	Անվաբացքի կարագավորում	10,000.00
78	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	3,000.00

6. Ղեկային մեխանիզմ		
79	Ղեկային կալունի հանում և տեղադրում	25,000.00
80	Ղեկային կալունի վերանորոգում	90,000.00
81	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	20,000.00
82	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	6,000.00
83	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	13,500.00
84	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	5,500.00
85	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	3,000.00
7. Արգելակային համակարգ		
86	Գլխ. գլանի հանում և տեղադրում	6,000.00
87	Գլխ. գլանի վերանորոգում	5,500.00
88	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	20,000.00
89	Բանվ. գլանի հանում և տեղադրում	7,500.00
90	Բանվ. գլանի վերանորոգում	10,000.00
91	Արգելակային համակարգի օդահանում	2,500.00
92	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	5,000.00
93	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	5,000.00
94	Առջևի սուպպորտի վերանորոգում	6,000.00
95	Հետևի սուպպորտի վերանորոգում	6,000.00
96	Արգելակային փողրակի փոխարինում	3,000.00
97	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	6,000.00
98	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	6,000.00
99	Հետևի կոճղակների փոխարինում	5,000.00
100	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	7,000.00
101	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	6,000.00
102	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	4,000.00
103	ABS-ի հանում և տեղադրում	10,000.00
104	ABS-ի վերանորոգում	22,000.00
105	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	5,000.00
106	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	6,000.00
8. Էլեկտրասարքավորում		
107	Էլեկտրասարքավորման վերանորոգում	28,000.00
108	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	12,000.00
109	Գեներատորի հանում և տեղադրում	8,500.00
110	Գեներատորի վերանորոգում	17,500.00
111	Մեկնարկիչի հանում և տեղադրում	12,000.00

112	Մեկնարկիչի վերանորոգում	19,000.00
113	Առջևի լապտերի հանում և տեղադրում	4,000.00
114	Հետևի լապտերի հանում և տեղադրում	4,000.00
115	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	5,000.00
116	Վազքաչափի հանում և տեղադրում	3,000.00
117	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	10.00
118	Սարքերի պանելի հանում և տեղադրում	12,000.00
119	Արագաչափի հանում և տեղադրում	5,500.00
120	Ազդանշանի հանում և տեղադրում	5,000.00
121	Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում	5,000.00
122	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	11,000.00
123	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	8,000.00
124	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	17,000.00
125	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	42,000.00
126	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	30,000.00
127	Էլեկտրական տվիչների փոխարինում	3,500.00
128	Էլեկտրական անջատիչների փոխարինում	2,500.00
129	Վառոցքի մոմերի փոխարինում	6,000.00
130	Կոնդիցիոների լիցքավորում	22,000.00
131	Կոնդիցիոների վերանորոգում	26,000.00
9. Այլ ծառայություններ		
132	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար Երևանում	1,200.00
133	Անիվի հանում և տեղադրում	1,000.00
134	Անվադողի վերանորոգում	1,000.00
135	Անիվի բայանսավորում	1,000.00
136	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	1,500.00
137	Խառատային աշխատանքներ	3,000.00
138	Փականագործի աշխատանքներ	3,000.00
139	Անիվի վալց	4,000.00
	ՀԱՎԵԼՎԱԾ Բ	
ՏՍ-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		*Այլ պետությունների արտադրության մեքենաներ*
1. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ		

1	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր	10.00
2	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր	4,000.00
3	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր	5,000.00
4	Յուղի զտիչ	5,000.00
5	Յուղի պոմպ	33,000.00
6	Յուղի պոմպի շարժաբեր	7,500.00
7	Յուղի ռադիատոր	48,000.00
8	Յուղի փողրակ	5,000.00
9	Յուղի ծորակ	10.00
10	Վառոցքի մոմ	6,000.00
11	Ինժեկտորի ֆորսունկա	35,000.00
12	Վառելանյութի մղիչ էլեկտրական	70,000.00
13	Վառելանյութի զտիչ	28,000.00
14	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	10,000.00
15	Վառելանյութի փողրակ	5,000.00
16	Օդի զտիչ	8,000.00
17	Ջերմաստիճանային տվիչ	11,000.00
18	Յուղի տվիչ	10,000.00
19	Բաշխիչ լիսեռի տվիչ	21,000.00
20	Օդի ծախսի տվիչ	20,000.00
21	Արագաչափի տվիչ	20,000.00
22	Հովհարի տվիչ	17,000.00
23	Ջրի տվիչ	15,000.00
24	Բենզոբաքի տվիչ	17,000.00
25	Մարման ընթացքի կարգավորիչ	12,500.00
26	Մարման ընթացքի տվիչ	18,500.00
27	Ղեկավարման համակարգիչ	270,000.00
28	Պարապ ընթացքի տվիչ	13,500.00
29	Դրոսելային փականի տվիչ	17,500.00
30	Թթվածնի տվիչ	35,000.00
31	Սրահի զտիչ	10,000.00
2. Սառեցման և արտածման համակարգ		
32	Հովհարի փոկ	20,000.00
33	Հովհար	35,000.00
34	Ռադիատոր	120,000.00
35	Ընդարձակող բաք	18,000.00
36	Ռադիատորի փողրակ	6,000.00

37	Թերմոստատ	19,000.00
38	Ջրի պոմպ	52,000.00
39	Ջրի պոմպի առանցքակալ	10,000.00
40	Ջրի պոմպի թևակ	10,000.00
41	Սառեցման հեղուկ 1 լիտր	3,000.00
42	Ապակիների մաքրման չսառող հեղուկ 1 լիտր	2,000.00
43	Ջրի պոմպի սոնանիվ	10.00
44	Հոլովակ	8,000.00
45	Փոկ	12,000.00
46	Փոկ կոնդիցիոների	12,000.00
47	Ծորակ	10.00
48	Խլարարի ներդիր	12,000.00
49	Խլարարի կախոց	3,000.00
50	Կրոնշտեյն	3,000.00
51	Անուր (Խամուտ)	1,200.00
52	Խլարար	300,000.00
53	Ռեզոնատոր	10.00
54	Վառարանի ռադիատոր	60,000.00
3. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ		
55	ԱՓՏ-ի զտիչ	12,000.00
56	ԱՓՏ յուղ, 1 լիտր	6,000.00
57	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	6,000.00
58	Հերմետիկ	1,000.00
4. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ		
59	Կարդանային լիսեռ	30,000.00
60	Էլաստիկ մուֆտ	15,000.00
61	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	15,000.00
62	Կարդանային լիսեռի խաչուկ	13,000.00
5. Կախոց		
63	Տրավերս	220,000.00
64	Կրոնշտեյն	10,000.00
65	Ձախ կամ աջ հոդակապ	65,000.00
66	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	12,000.00
67	Անվակունդ	90,000.00
68	Անվակունդի խցուկ	12,000.00
69	Անվակունդի ներքին առանցքակալ	18,000.00

70	Անվակունդի արտաքին առանցքակալ	10.00
71	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	118,000.00
72	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	15,000.00
73	Ձախ կամ աջ հոդակապի խցուկ	9,000.00
74	Հարվածամեղմիչի թասակ	22,000.00
75	Ջսպանակ	25,000.00
76	Առջևի հարվածամեղմիչ	80,000.00
77	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10,000.00
78	Հարվածամեղմիչի վռան	5,000.00
79	Ներքևի լծակ	40,000.00
80	Ներքևի լծակի վռան	9,000.00
81	Վերևի լծակ	60,000.00
82	Վերևի լծակի վռան	10,000.00
83	Գնդե հոդակապ	28,000.00
84	Առջևի կայունարար	60,000.00
85	Առջևի կայունարարի վռան	5,000.00
86	Առջևի կայունարարի առջևի վռան	5,000.00
87	Հետևի զսպանակ	10.00
88	Հետևի ցնցամեղմիչ	75,000.00
89	Հետևի մետաղաձող (շտանգա)	50,000.00
90	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	10.00
91	Հետևի անկյունագծային լծակ	10.00
92	Անկյունագծային լծակի վռան	10,000.00
93	Աջ կամ ձախ ձգան	18,000.00
94	Ծայրակալ	12,000.00
95	Ձգան մեջտեղի	15,000.00
6. Ղեկային մեխանիզմ		
96	Ղեկային կալուն	250,000.00
97	Ղեկային կալունի առանցքակալ	35,000.00
98	Ղեկային կալունի խաչուկ	22,000.00
99	Հիդրոուժեղարար	90,000.00
100	Հիդրոուժեղարարի փոկ	8,000.00
101	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	10.00
102	Հիդրոուժեղարարի պոմպ	45,000.00
103	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	10.00
104	Ղեկային ձող	70,000.00
105	Ղեկային ձողի ծայրակալ	10.00

106	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	5,500.00
107	Ճոճանակ	10.00
108	Ճոճանակի վռան	10,000.00
7. Արգելակային համակարգ		
109	Գլխավոր գլան	75,000.00
110	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	18,000.00
111	Վակուումային ուժեղարար	200,000.00
112	Բանվորական գլան	25,000.00
113	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	10.00
114	Արգելակային փողրակ	10,000.00
115	Սուպպորտի ուղղորդիչ	7,000.00
116	Սուպպորտի մանժետ	18,000.00
117	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	35,000.00
118	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	40,000.00
119	Առջևի արգելակային սկավառակ	70,000.00
120	Հետևի արգելակային սկավառակ	60,000.00
121	Ձեռքի արգելակի ճոպան	10,000.00
122	ABS-ի տվիչ	70,000.00
123	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	5,000.00
124	Ձեռքի արգելակի ճոպան	10.00
8. Էլեկտրասարքավորում		
125	Գեներատոր	250,000.00
126	Գեներատորի դիոդային կամրջակ	70,000.00
127	Գեներատորի ռելե	22,000.00
128	Գեներատորի առանցքակալ	15,000.00
129	Ստարտեր	180,000.00
130	Ստարտերի ռելե	18,000.00
131	Ստարտերի ածուխ	15,000.00
132	Բենդեքս	27,000.00
133	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	27,000.00
134	Վառոցքի մոմ	5,000.00
135	Լամպ	12,000.00
136	Էլեկտրական անջատիչ	4,000.00
137	Էլեկտրական տվիչ	15,000.00
138	Էլեկտրական չափիչ սարք	10.00
139	Բոնկման կողպեք	25,000.00
140	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	120,000.00

141	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	80,000.00
142	Վառոցքային լարերի խուրց	30,000.00
143	Վառոցքի մոմի ծայրակալ	7,000.00
144	Վազքաչափ	10.00
145	Վազքաչափի ճոպան	10.00
146	Արագաչափ	10.00
147	Ազդանշան	25,000.00
148	Ապակելվացիչ	8,000.00
149	Ապակելվացիչի շարժիչ	12,000.00
150	Դռների կենտրոնական փական	120,000.00
151	Էլեկտրաամբարձիչ	46,000.00
152	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	80,000.00
Ընդամենը ծառայություններ		1,308,550.00
Ընդամենը ապրանքներ		5,081,390.00
Ընդամենը		6,389,940.00

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 900000900283
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Սողոմոնյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՎՀՀ 00873228
Հ/Հ 1510012745550100
«Արարատբանկ» ԲԲԸ
Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա. Լալայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«12» 12 2019թ. կնքված
ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020-2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/7	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
ՀՀ՝ 900000900283
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Արթուր Մոսինյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
ՀՎՀՀ 00873228
Հ/Հ 1510012745550100
«Արարատբանկ» ԲԲԸ
Ֆլեշ Մոտորս ՍՊԸ-ի տնօրեն՝
Ա. Լալայան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
«12» 12 2019թ. կնքված
ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«12» 12 2019թ. կնքված
ՊԾԳՀ-ԾՁԲ-2019/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն